ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ՀՀ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻՆ

16.06.2014 09:30

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը դիմել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանին՝ ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի քննչական բաժնում փաստաբան Ինեսսա Պետրոսյանի նկատմամբ թույլ տրված ոչ օրինական գործողությունների կապակցությամբ ծառայողական քննություն նշանակելու համար:

Հիշեցնում ենք, որ 14.06.2014 թվականին ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի քննչական բաժնում փաստաբան Ինեսսա Պետրոսյանի նկատմամբ թույլ են տրվել ոչ օրինական գործողություններ, մասնավորապես՝ քննչական բաժնի պետը քաշել է Ինեսսա Պետրոսյանի ձեռքից, վիրավորել է նրան՝ խոչընդոտելով փաստաբանի մասնագիտական պարտականությունների կատարմանը: Քննչական բաժնի պետի կողմից ստեղծված այս իրավիճակում, վկայի կարգավիճակ ունեցող քաղաքացի Անահիտ Մկրտչյանի ինքնազգացողությունը վատացել է և տեղափոխվել է հիվանդանոց:

ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչները 14.06.2014թ. անմիջապես այս միջադեպի մասին տեղեկացրել են ՀՀ ոստիկանության հանձնախմբի անդամներին:

ՀՀ փաստաբանների պալատի
մամուլի ծառայություն

Առաջարկվող նորություններ

20.09.2013ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՀՀ ՓՊ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻՆ

25.10.2013ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

23.10.2013ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ (ABA/ROLI) ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ
ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՏ

18.10.2013ՀՀ ՓՊ
ՆԱԽԱԳԱՀԻ 17.10.2013Թ
«ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳԾՈՎ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
N11-Ա ՈՐՈՇՈՒՄԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })